

628.94

2-25



# ՆՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ  
ՀՐԱԵԶ ԳՈՒԳԱՉՆԵՐԻ (ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ)  
Յ Ա Ա Ա Յ

628-74  
2-25

ВЪСТЪДЪ

1934

34-K  
2868

04 AUG 2010

№ 10

Համաձայնեցված և  
ԽՍՀՄ Հողմողկոմատի հետ

Հաստատում եմ  
ԽՍՀՄ Կենտրոնակոմին  
կից կոմ. Տնտ. Համ. Խորհրդի  
նախագահ՝ (Կուրյակ)  
21—11—1933 թ.

ՀԱՅԱՀՈՒԹԵԿԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ԲՈՒԺՈԽԾԵՎՈՒՄ  
Ակադեմիա Խառ  
СССР

## ՆՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ՀՐԱԵԶ  
ԳՈՒԳԱՉՆԵՐԻ (ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ) ԿԱՄԱՐ

### 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Հըգեհները կանխելու և նրանց գեմ ակտիվ պայքարելու գործին կոլտնտեսական լայն մասսաներին մասնակից անելու նպատակով, կոլտնտեսությանը կից կազմակերպվում և հրշեջ գուգաղ, վորը գործում և այս կանոնադրության հիման վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վորմալ կանոնադրությունն իր գործադրման պահից տարածվում է ԽՍՀՄ տերրիտորիայի վրա գտնվող կոլտնտեսությունների բոլոր հրշեջ գուգազների վրա, վորոնք պարտավոր են 3 ամսվա ընթացքում տոմարագրվել սահմանված կարգով (տես կետ 15):

2. Հրշեջ գուգազը, վորպես կանոն, կազմակերպվում է յուրաքանչյուր կոլտնտեսությանը կից, բայց յեթե ավագան բնակիցված վայրում մի քանի կոլտնտեսություններ կան, ապա կոլտնտեսության անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովի վորոշմամբ և զյուղխորհրդի համաձայնությամբ կարելի յե կազմակերպել միացյալ գուգաղ, վորը կսպասարկի նույն վայրի բոլոր կոլտնտեսություններին:

**ՆԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.** — Կոլտնտեսային միացյալ գուգազները գործողության ըրջան կարող են ունենալ վոչ ավելի քան 3-4 կիլոմետր, նայած տեղական պայմաններին:

3. Կոլտնտեսություններում հրշեջ գուգազները կազմակերպվում են համաձայն այն պլանների, վորոնք մշակվում են հողային մարմինների ըրջանային հրշեջ հազմակերպությունների կողմից կոմմունալ տնտեսությունների հրդեհային պահպանության ըրջանային վարչությունների համաձայնությամբ և հաստատվում ըրջործկոմների նախադահությունների կողմից:

4. Հրդեհային գումակները, հրդեհային դեպոնները, տեխնիկական սարքավորումը և հանդերձանքն, ինչպես և գուգազի հերթապահող անձնական կազմը են ձիյերն ոգտագործելու, այլ և գուգազին այս կանոնադրության նպատակներին հակասող աշխատանքները հանձնարարելու համար, զանյառուներն որինական պատասխանատվության են յենթարկվում (Աշխ. Պաշ. Խորհրդի 1921 թ. մայիսի 9-ի վորոշումը, ԽՍՀՄ. Ո. № 39 հոդ. 208):

5. Գուգազին իրավունք ե վերապահվում ունենալ ԽՍՀՄ. սահմանված միասնական ձեվի գրոշակ և բըլանկային կնիք:

Գուգազի անդամներն իրավունք ունեն բոլոր հրշեջ գուգազների համար սահմանված միասնական ձեվ զգեստ ունենալ:

## 2. ԳՈՒԳԱԶԻ ԽՆԴԻԲՆԵՐԸ.

### 6. Գուգազի խնդիրներն են՝

ա) անմիջական պայքարը հրդեհների դեմ և սոցիալիստական կոլտնտեսային գույքի (պահեստների անասնակերի, կաթնա - անասնաբուժական ֆերմաների, աղայների, նորակառույց շենքերի և այլն) պաշտպանությունը.

բ) կազմակերպված ոգնություն հասցնելն ամեն տեսակի այլ տարերակն աղբաների, այն եւ հեղեղումների, փլուզումների դրամականությունը ժամանակ.

շ) կոլտնտեսային ֆերմաների, ձեռնարկությունների, պահեստների, նոր շինարարության և հասարակական նշանակություն ունեցող վայրերի՝ թատրոնների, կինոների, ակումբների և այլի վերաբերմամբ կանխական հակիրդեհային ձեռնարկումներ անցկացնելու գործի վրա հսկելը.

դ) տվյալ շրջանը հրդեհային տեսակետից վտանգավոր լինելու հարցն ուսումնասիրելը.

է) կոլտնտեսությունների և բնակեցված վայրերի պլանավորման և վերապահավորման աշխատանքներին մասնակցելն, այլ և սպասարկվող շրջանում հակահըրդեհային գործնական միջոցառումներ մշակելը.

զ) հրդեհ առաջ գալու դեպքում արհեստական լրակներ, ջրհորներ սարքելը, զեպի գոյություն ունեցող հրդեհային ջրամբարները ճանապարհներ անցկացնելը և դրանց վրա հսկելը.

ը) իր սեփական աշխատանքով հրդեհային զեպոյի կառուցմանը և սարքու կարգին պահպանելուն, այլ և հրշեջ ինվենտարի և սարքավորման վերանորոգմանը մասնակցելը.

թ) հրդեհները կանխելու և նրանց դեմ պայքարելու վերաբերյալ գոյություն ունեցող տեխնիկական ուսումնասիրելը և ամբողջ բնակչությանը հրդեհային ձեռնարկումներին ծանոթացնելը:

ժ) մասսայական հակահրդեհային կամպանիաներ կազմակերպելն ու դրանց մասնակցելը.

ի) ավտոգարի բջիջների հետ իր աշխատանքը համապատասխանորեն համաձայնեցնելու միջոցով հրդեհային ավտո-մատո-մեքենայացումն ու ճանապարհային շինարարությունը գործնականորեն ուսումնասիրելը և դրան աջակցելը.

լ) ծառատնկման կամպանիայի կազմակերպման ու անցկացմանն, ինչպես նաև գոյություն ունեցող ծառատնկումների պահպանության մասնակցելը.

լլ) Գետապի ստորին մարմիններին կոպարային պահպանվագրության գործում ակտիվ աջակցություն ցույց տալը.

ծ) Հրդեհային պահպանության աշխատանքներին, այն ե՝ արհեստական լճակներ փորելուն, պատվարներ սարքելուն, գեղի ջրամբարները ճանապարհներ անցկացնելուն, ծառատնկման, չենքերի և այրվող նյութերի միջև յեղած տարածության մաքրման և այլ աշխատանքներին մենատնտեսներին մասնակից անելն՝ ինչպես պնձնական մասնակցությամբ, նույնպես և դրամական մուծումով, զյուղխորհրդի կողմից հաստատված պլանների համաձայն:

### 3. ԳՈՒԳԱԶԻ ԿԱԶՄԸ.

7. Գուգազի անձնական կազմը վորոշում և կորունտեսության վարչությունը, տեղական հողային մարմնի Հրդեհային պահպանության համաձայնությամբ, սակայն պետք է լինի վոչ պակաս քան 15 հոգուց բաղկացած:

8. Հրդեհային գուգազի անդամ կարող են լինել կոլտնտեսության վոչ պակաս 18 տարեկան հասակ ունեցող այն անդամները, վորոնք չունեն Հրդեհային գործով զբաղվելու արգելք հանդիսացող ֆիզիկական պակասություններ: Գուգազի մեջ ընդունվում են այն բոլոր մենատնտեսները, վորոնք ընտրողական իրավունքից չեն զրկված:

9. Գուգազի անդամներ ընդունում և հեռացնում են կոլտնտեսության վարչությունը: Այն կոլտնտեսականները և մենատնտեսները, վորոնք ցանկանում են գուգազի մեջ մտնել, նրա պետք միջոցով դիմումներ են տալիս կոլտնտեսության վարչությանը:

10. Հրդեհային գուգազի անդամները նրա կազմից գուրս են գալիս հետեւյալ ղեղքերում՝ ա) կոլտնտեսության վարչության վորոշման համաձայն, գուգազի պետք առաջադրությամբ, բ) իրենց ցանկությամբ, պայմանով, վոր այլ առթիվ դիմումները գուգազի պետքն տրված լինեն և վոչ ուշ քան հեռանալու որվանից տաս որ տոռչ:

### 4. ԳՈՒԳԱԶԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԽԲԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ա. Գուգազի բոլոր անդամները պարտավոր են՝  
ա) ուսումնասիրել և իմանալ գուգազի կանոնադրությունը և Հրահանգները.

բ) անօլայմանորեն լևմարդիվել իրենց անմիջական պետքերի ծառայության վերաբերյալ կարդագրություններին.

շ) տագնապի ազդանշանից հետո անմիջապես դուրս գալ Հրդեհի կամ հավաքի վայրը կրակի մարմանը կամ գործնական զբաղմունքներին ակտիվ մասնակցելու համար.

դ) Հսկել իրենց հանձնված Հրդեհային ինվենտարի և սարքովորման պահպանության վրա և նկատված թերությունների մասին անմիջապես հայտնել իրենց պետքերին.

ե) Հսկել, վորպեսզի կոլտնտեսության անդամները կատարեն Հրդեհային ապահովության վերաբերյալ սահմանված կանոնները, զեկուցելով նկատված բացերի մասին գուգազի պետին:

### 5. ԽԲԱՎՈՒՆՄԱՆ ՅԵՎ ՏՈՒՑԺԻ ՄԻՋՈՑՆԵՐ.

12. Ակտիվ աշխատանքի և Հրդեհային պահպանության ամրացման և զարգացման գործում հատուկ ծառայություններ մատուցելու համար գուգազի անդամները կարող են պարզեցները՝

ա) գովառանապրով.

բ) հատուկ ժետոններով.

շ) դրամական կամ այլ արժեքավոր վճարումներով.

դ) Հրդեհային աշխատողների համար որենքով սահմանված պարզեցներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Յուրաքանչյուր պարզեցները մասին կոլտնտեսության վարչությունը պետք է վորոշում կայացնի.

2. «զ» կետում նշված անձանց պարզեցները մասին հողբաժինների տեղական Հրդեհային պահ-

պանությունը միջնորդում և վերադաս մարմինների առաջ:

13. Հրդեհային ծառայության ժամանակ պետի կարգադրությունները չկատարելու համար գուղազի անդամները յենթարկվում են հետեւյալ տույժի՝ ա) նախադրուշացման, բ) նկատողության և գ) գուղազից հեռացնելու:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— «ա» և «բ» կետերում նշված տույժի յենթարկում է գուղազի պետը և համան արձակում այդ մասին. «գ» կետի համաձայն գուղազի կազմից հեռացնում է կոլտնտեսության վարչությունը:

#### 6. ԳՈՒԳԱԶԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ.

14. Հրդեհային պահպանության ընդհանուր պատասխանատվությունը կոլտնտեսության մեջ կրում է վարչության անդամներից վորեւ մեկը, վորին նշանակում է նույն վարչությունը:

15. Հրդեհային ապահովության դրության ընդհանուր պատասխանատվությունը տվյալ չքանում և հրչել գուղազի անմիջական դեկտարությունը գրչում և նրա պետի վրա:

16. Գուղազի պետեր նշանակում են և հեռացնում է կոլտնտեսության վարչությունը տեղական հողբաժնի հրդեհային պահպանության համաձայնությամբ:

17. Գուղազում ընդհանուր կանոնադրություններ նրա պետն անում են հրամանների միջոցով, վորոնք հաստատվում են կոլտնտեսության նշանակած անդամի կողմից (կետ 14):

#### 7. ԳՈՒԳԱԶԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ.

18. ա) գուղազի պահպանման հետ կապված ծախսերը հոգում են այն կոլտնտեսությունը, վորին կից և կազմակերպված գուղազը, կամ մի քանի կոլտնտեսությունները, յեթե գուղազը միացյալ են այդ ծախսերը ծածկվում են նաև գյուղիորհուրդների բյուջեների և հատկացումների հաշվին՝ հատուկ միջոցներից:

բ) մենատնտեսները կոլտնտեսային գուղազի պահպանության ծախսերին մասնակցում են ինքնահարկածան միջոցների և գյուղխորհորդի կողմից հաստատված նախահաշիվներով նախատեսնված հատկացումների հաշվին:

գ) մենատնտեսները համապատասխան քանակությամբ հերթապահ ձիյեր են գուրս բերում հրդեհային գեղոն գուղազի մարտական յելույթի համար, համաձայն գյուղխորհորդի կողմից հաստատված հերթականության ցուցակի:

#### 19. Գուղազին պետք են հատկացվի.

ա) Հատուկ հրդեհային գեղոն (սարայ) կոլտնտեսության կենտրոնում, ջեռացմամբ և լուսավորությամբ հրդեհային ինվենտարը և սարքավորումը պահպատճու համար. գեղոն իրեն կից պետք է ունենա հատուկ շենք գուղազի անդամների և ձիյերի հերթապահության համար: Յուրաքանչյուր հրդեհային գեղոնի մոտ պետք են սարքամաս լինի տապանալի հրդեհային սիդնալիզացիա:

բ) Հրդեհային ինվենտար, սարքավորում և հանդերձանք, ԽՍՀՄ Հողմողկոմատի հրդեհային գլխավոր տեսչության ներքության նորմաներով սահմանված քանակությամբ (բայց տեղական պայմանների կարելի յե այդ ավելացնել):

1. Ջեռքի հրշել պամպ.

2. Տակառներ, յուրաքանչյուրը 300 լիտրից փոքր պակաս առողջությամբ— 3 հատ

3. Կաշեփողեր գուրս ձգող՝ պնդողակներով— 100 մետր— 3 հատ.

4. Կաշեփողեր բռնող ( զանոնք ) յերկու ծայր 4-ական մետր:

5. Հիգրոպուլտ անթացուպ կաշի փողով 1 հատ

6. Հրդեհային գույլեր 3 հատ

7. Սանդուխք գուրս քաշովի 1 հատ

8. Սանդուխք հենովի 1 հատ

9. Հրդեհային կացիններ 4 հատ

10. Սարթածող 3 հատ

11. Հինգեր  
12. Ցեղան  
13. Բահեր  
14. Կուրծեր ամառային և ձմեռային ժեկական յուրաքանչյուր մեքենայի և տակառի համար  
15. Զիու սարք, յեթե սեփական ձիեր ունեն:

20. Հերթապահության (պահակության) համար հրդեհային գուգաղի անդամներին աշխորեր են տրվում: Հրդեհների վրա աշխատելու համար աշխորեր չեն տրվում:

21. Գուգաղի պետի աշխատանքը գնահատվում է վորպես բրիգադավարի աշխատանք, հաշվելով նաև աշխորերն ըստ 4-րդ խմբի աշխատանքի առաջին տարում և ըստ 5-րդ խմբի հետագա տարիներում (ԽՍՀՄ Հողժողկոմատի 1933 թ. փետրվարի 28-ի վորոշումը):

#### 8. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.

22. Հաշվետվությունը և գործավարությունը գուգաղում տանում են նրա կոլտնտեսության համար սահմանված ձեվերով:

Գուգաղի գումարները պահպում և ծախսվում են կոլտնտեսության մեջ սահմանված կարգով:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—** Յեթե տվյալ զուգազր միացյալ ե, այսինքն, մի քանի կոլտնտեսությունների հաշվին ե պահպանվում, ապա միջոցների ծախսման ճշտության վրա հսկելու համար կազմակերպվում ե տնտեսական հանձնաժողով՝ միացյալ կոլտնտեսությունների, գրանց մասնակցության չափի համեմատ:

23. Գուգաղի ամբողջ գրասենյակային աշխատանքը կատարում ե կոլտնտեսության առաջնային առաջնորդությունը:

24. Տնտեսական տարին վերջանալուց հետո կոլտնտեսության վարչությունը կամ միացյալ գուգաղի տընտեսական հանձնաժողովը, կազմում ե տարեկան հաշվետվություն գուգաղի գործունեության և տվյալ շըբանի հրդեհային պահպանության դրության մտախ:

Հաշվետվությունը հաստատվում ե սպասարկվող կոլտնտեսությունների ընդհանուր ժողովում և ներկայացվում տեղական դյուլիսորհրդին:

#### 9. ԳՈՒԳԱՎԶԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳ.

25. Այն կոլտնտեսության վարչությունը, վորին կից գուգաղի կազմակերպված, պարտավոր ե 20 որվարնթացքում հայտնել այդ մասին տեղական գյուղխորհրդին, ցույց տալով գուգաղի անդամների թիվը, սարքավորումը և գործունեության շրջանը: Գյուղխորհրդը համապատասխան անդորրագիր ե տալիս գուգաղի տոմարագրման առթիվ և միաժամանակ տեղեկացնում ե այդ մասին հրդեհային պահպանության տեղական հողբաժնին:

26. Գուգաղի գործունեությունը, աղարում ե այն գեպքում, յերբ գյուղխորհրդի վորոշմամբ վերանայվում ե հրդեհային կազմակերպությունների գոյություն ունեցող պլանային ցանցը:

27. Գուգաղի ամբողջ գույքը պատկանում ե կոլտնտեսությանն, իսկ միացյալ գուգաղներում՝ մասնակցող կոլտնտեսությունների, գրանց մասնակցության չափի համեմատ:

Գուգաղը լուծարքի յենթարկելու գեպքում, նրա հրդեհային գույքն անցնում ե գյուղխորհրդի տրամադրությունը, վորին իր հերթին, հողբաժնի տեղական հրդեհային պահպանության համաձայնությամբ, հանձնում ե այդ գույքը նորակազմ գուգաղին և հատուցում սեփականատեր—կոլտնտեսությանը ստացված սարքավորման արժեքը, հաշվի առնելով նուև շիջուցումը:

## ՀՐԱՀԱՆԳ

ԱՌԱՏՆՑԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԳՈՒԳԱԶ-  
ՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

1. Գծւգազր բաժանվում է հետեւյալ ջոկատների՝  
ա) Կացնավորների ջոկատ կամ 1-ին ջոկատ.

բ) Փողավորների „ „ 2-րդ ջոկատ.

շ) Զրամատակարարների ջոկատ կամ 3-րդ ջոկատ.

դ) Պահապանների ջոկատ կամ 4-րդ ջոկատ.

Կամալոր հրշեց զուգազի կազմից դուրս մնացած  
անձանց, զուգազի պետք բաշխում և կացնավորների և  
փողավորների հիմնական ջոկատների միջև։ Յուրաքան-  
չյուր կրտնուեականին և մենատնուեսին ամբացվում  
է հակառդեհային սարքավորման վորեւ առարկա, այն  
և՝ կացին, դույլ, բահ և այլն, վորը նա պարտավոր և  
բերել իր հետ հրդեհի վայրը դուրս դալիս. այդ առար-  
կայի նկարը պետք ե փակցված լինի յուրաքանչյուր  
տնատիրոջ բնակելի շենքի աջ կողմում։

2. Կացնավորների ջոկատն ունի իր արամագրու-  
թյան տակ լինդ և փրկության զործիք, ինչպես և սահ-  
պուխքներ ու լուսավորության պարագաներ։ Հրդեհնե-  
րի և տառմնական զբազմունքների ժամանակ ջոկատը  
գլխավճրապես զբազմում է շենքեր, կտուրներ, հատակ-  
ներ և առաստաղներ քանդելու, զույք և մարդիկ փրկե-  
լու դործով, և տապնապի դեպքում սայլիք և լծում։

3. Փողավորների ջոկատն ունի իր արամագրության  
տակ պոմպեր, հիդրոպոմպեր, հրամարիչներ, կա-  
շևիողեր, բներ, յեռակներ, ստինդիրներ և այլ ջրա-  
մատակարարմանը մերաբերող առարկաներ, բացառու-  
թյամբ հատուկ մեքենաների և պարագաների, վորոնք  
հատուկ ձեմով են սպասարկում (մոտոպոմպեր, ավտո-  
պոմպեր և այլն)։ Հրդեհների և ուսումնական զբազ-  
մունքների ժամանակ փողավորներն աշխատում են բնե-

րով, անց են կացնում և հավաքում կաշի փողեր զծեր,  
հսկում դրանց վրա, վերանորոգելով և փոխադրելով զծե-  
րը, պտնվում են ստինդիրների, յեռակների և հրշեց  
ծորակների մոտ։

4. Զրամատակարարների ջոկատն իր արամագրու-  
թյան տակ ունի տակառներ, դույլեր, շվարբներ,  
ամաններ և այլն։ Հրդեհների յեվ ուսումնական զբազ-  
մունքների ժամանակ ջոկատի անդամները ջուր են տալիս  
պոմպերին, այլ և բանեցնում են ձեռքի հրշեց պոմպեր։

5. Պահապանների ջոկատի պարտականությունն է  
հրդեհի և այլ տարրերային աղետների ժամանակ պահ-  
պաննել այն կոլտնտեսային և պետական գույքը, վորը  
դուրս ե բերգում այրվող կամ վտանգված շարքերից,  
այլ և պահպաննել դուրս բերգող խոշոր և մանր անասուն-  
ները, թռչունները և այլն։ Ջոկատի անդամներից վոչ  
վոք իրավունք չունի թողնել իր պոստն առանց անմի-  
ջական պետի թույլտվության։

6. Հերթակալահությունների, պոստերի և այլ կարգը  
սահմանվում է հրշեց զուգազի ներքին կարգ ու կանոնի  
վերաբերյալ հրահանգով, հաստատված կոլտնտեսու-  
թյան վարչության կողմից ի զարգացումն կանոնադ-  
րության և այս հրահանգի հողբաժնի տեղական հրդե-  
հային պահպանության համաձայնությամբ։

## ԳՈՒԳԱԶԻ ՊԵՏԸ.

7. Փուգազի պետը նրա գլխավոր և միակ տեխնի-  
կական զեկավարն և հանդիսանում և պատասխանառու  
յե նրա ամբողջ գործունեության համար։

8. Փուգազի պետը զեկավարում է գուգազավորդնե-  
րի պրակտիկ նախապատրաստման գործն, ինչպես հը-  
ղեցներ կանխելու, նույնակես և հրդեհներ հանգնելու  
բնագավառում։ Պետը գուգազի զործունեության ըլլ-  
ջանում հոգում է հրդեհային պահպանության վրա,  
հայտնելով զյուղիորհրդին և հողբաժնի տեղական  
հրդեհային պահպանության կամ շրջդործկոմին, գո-  
յություն ունեցող կանոնների բոլոր խախտումների  
մասին։

9. Նա հետեւում է, վորպեսզի գուգաղները կատարեն իրենց պարտականությունները և տույժի յենթարկում նրանց սահմանված տույժացուցակի համաձայն:

10. Պետք պետք և մանրամասնորեն գիտենա և կարողանա բացատրել գուգազի տրամադրության տակ յեղած բոլոր հրամարիչների նպատակն ու գործողությունը:

11. Հրդեհների և ուսումնական զբաղմունքների ժամանակ գուգազի պետք միանձնաբար ղեկավարում ե գուգազի ամբողջ աշխատանքը և վոչ վոք իրավունք չունի խառնվելու նրա գործին: Պրոֆեսիոնալ հրդեհային կազմակերպության իր գիրքով ավելի բարձր կանգնած պետք գործողության վայրը ժամանելու կեպքում, գուգազի պետք նրան և հանձնում իր ավագեպքում, թողնելով իրեն իր գուգազի ղեկավարությունը, թողնելով իր գուգազի ղեկավարությունն, առանձին հրշեջ մասի պետի իրավունքներով:

12. Գուգազի պետք վարում և ստորագրում գուգազի վերաբերող ամբողջ գըագրությունը, ու Հովանում և իր մոտ բոլոր գրքերը, Փորմուլաները և պատաթղթերը:

13. Յեթե մեկնելու, հիվանդության կոմ այլ պատճառներով ժամանակավորապես անհնար և լինում պետք աշխատանքը, ապա գուգազի պետքավարել գուգազի աշխատանքը, ապա գուգազի պետք հրամանով հանձնում և իր իրավունքներն ու պարտը հրամանով հանձնում իր ողնականին՝ կացնավորների ջողակատի պետին:

ԳՈՒԳԱԶԻ ՊԵՏԻ ՈԳԱԿԱՆԸ ԱԱՅԵՎ, ԿԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ  
ԶՈԿԱՏԻ ՊԵՏԸ

14. Կացնավորների ջոկատի պետք գուգազի պետի ողնականն և բացակայելու ժամանակ փոխարինում և նրան:

15. Ժողովում է (վաղորոք մշակված ծրագրով) ըստ հարավորության լրիվ տեղեկություններ հրդեհուակության լրիվ տեղեկություններ հրդեհուակության լրիվ տեղեկություններ (ուների, նրանց ծագման պատճառների մասին և այլն (ուների, նրանց ծագման պատճառների մասին գուգազի պետին)):

16. Հակում է իր ջոկատի գործիքների սարքութարգին լինելու վրա:

17. Զբաղվում է իր ջոկատի ուսուցմամբ:

18. Ղեկավարում է ջոկատի գործողությունները Հրդեհների, ուսումնական զբաղմունքների ժամանակ, կազմում ջոկատի անդամների ցուցակ, առաջադրում և ջոկատի ղանցառու անդամներին տույժի յենթարկելու և աշքի ընկնողներին պարզեվատրելու համար:

19. Գուգազի պետին փոխարինելիս, իր բացակայության ժամանակաշրջանի համար տեղակալ և նշանակում ջոկատի գուգագորգներից, հայտնելով այդ ժաման կոլտնտեսության նախագահին:

ՓՈՂԱՎՈՐՆԵՐԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԶՈԿԱՏԻ ՊԵՏԸ

20. Փողավորներն և պահապաններն ունեն այն բոլոր պարտականությունները, վորոնք հիշատակված են այս հրահանգի 16, 17, 18 հոդվածում:

21. Պահապանների ջոկատի պետն անմիջաբար ղեկավարում է իր ջոկատի աշխատանքը հրդեհների և այլ տարիերային աղետների ժամանակ կոլտնտեսաւին և պետական դույքը պահպանելու գործում:

ՊԱՍՄՆԻ ՀՐՇԵՋ ԳՈՒԳԱԶՈՐԴՆԵՐԻ ԶՈԿԱՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

22. Կոլտնտեսային հրշեջ գուգազներին կից 14-ից մինչև 19 տարեկան հասակ ունեցողներից կարելի յեկազմակերպել պատանի հրշեջ գուգազների ջոկատներ:

Պատանի գուգազորդների ջոկատների աշխատանքներին կարելի յետ մասնակից անել տեղական պիտուեր ջոկատներ:

Պատանի գուգազորդների ջոկատը յենթարկվում է կոլտնտեսության վարչությանն ու նրա աշխատանքն իր գիրլոգիական բնագավառում կապակցվում է Կոմյերիտմիության տեղական կազմակերպության հետ, վորիների հարկացացուցիչը մասում է հրշեջ գուգազի կազմի մեջ:

23. Պատանի գուգազորդների ջոկատի կազմա-

կերպման նպատակն է՝ սովորեցնել յնըիտասարդությանը հրդեհային -տեխնիկական գիտելիքները:

24. Պատանի գուգազորդների ջոկատի պետին առաջադրում և կոմյերիտմիության տեղական կտրմակերպությունը:

25. Պատանի գուգազորդների ջոկատների հրդեհային-տեխնիկական ուսուցումը ղեկավարում և գուգազի պետն, ոգտագործելով հրդեհի ժամանակ այդ ջոկատները միմիայն ոժանդակ աշխատանքի համար, այլ վոչ կրակի մեջ և կյանքի համար վտանգավոր պայմաններում:

26. Պատանի հրշեջ գուգազորդները հրդեհային տեխնիկական զրադարձունքների, ինչպես և հրդեհի ժամանակ, իրավունք ունեն համազեստ հազնել կամավոր հրշեջների հետ ընդհանուր հիմունքներով:

27. 16 տարին լրանալուց հետո, պատանի գուգազորդների ջոկատի անդամները մեխանիկորեն դաւանում են գուգազի անդամներ:

### ՀՐԱՀԱՆԴԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հստ տեղական պայմանների անհրաժեշտ մուվութուններ կամ լրացումներ հրահանդի մեջ կարելի յե մտցնել միմիայն Խ.Ս.Հ.Մ. Հրդեհային Պահպանության Պետի թույլ տվյալներ:

**ԽՍՀՄ ՀՐԴ. ՊԱՀՊ. ՊԵՏԻ ԺԱՄ. ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**ՅԵՎ. ԽՍՀՄ ԿԵՆՏ. Գ. ԿԻՅ. Կ. Տ. Հ. Խ. ՆԱԽ.**

**ԱՆԳԱՄ (ՊԲԻԴԱՆՆԻԿՈՎ)**

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻНСТИΤՈՒՏ  
ԵՎՅՈՒՆԱՆԱԿԱՆ  
Ակադեմիական  
Համական Խուս  
СССР



ՀՀ Ազգային գրադարան



NL0282003